Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԳՈՐԻՍ
ՀԱՅԱՍՏԱՆ

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

GORIS
ARMENIA

Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS) Project

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

COMUS
COMMUNITY-LED URBAN STRATEGIES IN HISTORIC TOWNS

ԳՈՐԻՍ
ՀԱՅԱՍՏԱՆ

«Համայնքի կողմից իրականացվող
քաղաքաշինական ռազմավարություններ
պատմական քաղաքներում»
(COMUS) ծրագիր

GORIS
ARMENIA

Community-led
Urban Strategies
in Historic Towns
(COMUS) Project

Գորիսի համայնապատկեր, լուս.՝Հ. Սանամյանի
Panorama of Goris, Photo by H. Sanamyan

Ներածություն	4	Introduction
Պատմություն	6	History
Տեղական շահառուների խումբ	14	Local Stakeholders Group
Համընդհանուր տեսլական	18	Shared Vision
Համընդհանուր տեսլականի նպատակներ	20	Objectives of the Shared Vision
Նախնական ընտրված գործողություններ	24|26	Shortlisted Actions
Ընտրված գործողություններ	25|27	Selected Actions
Գորիսի քաղաքային պատմական փողոցների արդիականացում	28	Goris Urban Streets Rehabilitation
Հին Գորիսի քարանձավային բնակավայրի վերակենդանացում	42	Rehabilitation of Old Goris Cave town

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիրը Եվրամիության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող և Եվրամիության արևելյան գործընկերության մշակութային ծրագրի մաս հանդիսացող ծրագիր է, որը, ըստ էության, Կիևյան նախաձեռնության՝ «Մշակութային ժառանգության վերականգնումը պատմական քաղաքներում» պիլոտային ծրագրի շարունակությունն է: Ծրագրի գործառույթներն իրականացվում են 2015 թվականի հունվարի 1-ից ծրագրի անդամ երկրներում՝ Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս: Ծրագրի հիմնական գործընկերն է «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» միջազգային կազմակերպությունը (OWHC):

COMUS-ի հիմնական նպատակն է խթանել սոցիալական և տնտեսական զարգացումը՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները պատմական քաղաքներում: Ծրագիրն ուղղված է մշակելու ժառանգության վրա հիմնված ռազմավարություն, որը նպատակաուղղված կլինի պատմական քաղաքի կենտրոնի վերականգնմանը, կխթանի զբոսաշրջությունը և տնտեսական զարգացումը:

Գորիսն ընտրվել է COMUS-ի պիլոտային քաղաք և 2015 թվականից «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» միջազգային կազմակերպության դիտորդ անդամ է:

INTRODUCTION

An essential aspect for sustainable urban development is ensuring an active role of communities in decision-making about their own historic towns, and working together with experts and local authorities to realise these decisions.

"Community-led Urban Strategies in Historic Towns" (COMUS) project is a joint initiative of the European Union and the Council of Europe and is part of the Eastern Partnership Culture Programme of the European Union, considered to be the continuation of Kyiv Initiative: Pilot Project on "Rehabilitation of Cultural Heritage in Historic Towns". The functions of the project have been implemented since January 1, 2015 in member countries of the project - Armenia, Georgia, Ukraine, Republic of Moldova, Belarus. The key partner of the project is the international Organisation of World Heritage Cities (OWHC).

COMUS is focused particularly on promoting social and economic development, enhancing cultural heritage resources in historic towns. The project aims to develop heritage-based strategy that will address restoration of the historic town centre, will boost tourism and economic development.

Goris has been chosen as a pilot town for COMUS and since year 2015 it has been an observer member of the international Organisation of World Heritage Cities.



Գորիս քաղաքը 1885 թ.-ին, փայտի վրա գրավյուրա իրականացված Թ. Թեյլորի կողմից, արտագծվել է Բերթրանդ Պրովենանսի կողմից էլիկ Ռեկլուսի «Ունիվերսալ աշխարհագրություն՝ Երկիրն ու դրա բնակիչները» գրքի համար, հրատարակիչ՝ Վիրտու և ընկերություն, Լոնդոն

Town of Girusi (Goris) in 1885, Antique woodcut by T. Taylor, Drawn by Bertrand Provenance for "The Universal Geography, the Earth and its inhabitants" by Elisee Reclus, Published by Virtue և Co Ltd, London.



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գորիսը ՀՀ Սյունիքի մարզի հնագույն բնակավայրերից է, որտեղ 2016 թվականի տվյալներով՝ բնակչությունը կազմում է 29'320 մարդ: Պատմական աղբյուրներում Գորիսը հիշատակվում է դեռևս 13-րդ դարից: Այն հիմնադրվել է Վարարակն գետի ձախ ափին՝ բլուրներից, ձորերից, ժայռերից և քարանձավներից կազմավորված յուրահատուկ բնական միջավայրում, որտեղ, պաշտպանական նկատառումներից ելնելով, մարդիկ իրենց տները կառուցել են կոնաձև ժայռերի (քերծերի) և քարանձավների մեջ: Այդ պայմաններում բնակավայրի թաղամասերը կազմավորվել են բնական արահետների շուրջ:

HISTORY

Goris is one of the oldest settlements in the Syunik region of Armenia. According to the data of year 2016, the first references to it in historic sources go back to the 13th century. Goris was founded on the left bank of the Vararakn River, in a unique natural environment surrounded by hills, ravines, rocks, and caves, where, for defensive purposes, people used to build their homes in cone-shaped rocks and caves. Therefore, the districts of the settlement were formed along natural paths.

Ժայռափոր տների աստիճանական ընդլայնման և քանակի ավելացման հետևանքով 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, գլխավոր հատակագծի համաձայն, Գորիսը սկսում է վարգանալ գետի աջափնյա բարձրադիր հարթ տարածության վրա:

Երկրում ստեղծված նպաստավոր քաղաքական և տնտեսական պայմանների, ինչպես նաև տարածաշրջանում խճուղային ճանապարհաշինության ընդլայնման հետևանքով շրջակա քաղաքների միջև ստեղծված առևտրական ակտիվ կապերի շնորհիվ նոր Գորիսում շինարարական բուռն գործունեություն է ծավալվում: Փողոցների ուղղանկյուն հատակագծային ցանցի վրա ուրույն ճարտարապետությամբ կառուցվում են

Due to gradual expansion of the houses built in rocks and growth of their number, from the second half of the 19th century, according to the Master Plan, Goris started developing on the highland, flat area on the right bank of the river.

Owing to favourable political and economic conditions in the country, as well as due to expansion of highway road construction in the region as a result of an active trade relations among the neighbouring towns, active construction period started in new Goris. Today's residential districts with 1-2 storey houses, the social centre, administrative, commercial, and public buildings

Գորիսի Գուսան Աշոտի փողոց, 1936 թ.,
Հայաստանի պատմության թանգարանի արխիվ
Gusan Ashot Street in Goris, 1936,
Archive of the History Museum of Armenia 1936

Բնակելի քարայր, 20-րդ դարի սկիզբ,
լուս.՝ Գ. Գալստյանի
Cave settlement, early 20th c., Photo by: G. Galstyan

ներկայի քաղաքի պատմական կենտրոնը ձևավորող 1-2 հարկանի տներով բնակելի թաղամասերը, հասարակական կենտրոնը և վարչական, առևտրական ու հասարակական նշանակության շենքերը:

Կարճ ժամանակահատվածում Գորիսը ստանում է քաղաքի կարգավիճակ (1885 թ.-ին) և դառնում Զանգեզուր գավառի վարչական և առևտրական կենտրոնը: 20-րդ դարի սկզբին Գորիսը շրջանցող Ջուլֆա-Երևան երկաթգծի կառուցմամբ քաղաքը սկսում է կորցնել իր մի շարք կարևոր գործառույթները: Չնայած այդ հանգամանքին՝ առայսօր քաղաքի աստիճանական կարգացման հետևանքով գրեթե 2-3 անգամ ընդլայնվել է նրա կբաղեցրած տարածքը և ավելացել կառույցների քանակը:

that form the historic centre of the town were built on the rectangular network of the streets following the pattern of unique architecture.

Shortly afterwards, Goris received the status of a town (in 1885) and became the administrative and trade centre of Zangezur province. With the construction of Yerevan-Joulfa railroad circumventing Goris at the beginning of the 20th century, the town started losing a number of its important functions. Despite this fact, as a result of its gradual growth, the town has expanded its territory by 2-3 times and has increased the number of buildings.

Այդուհանդերձ, Գորիսի պատմական կենտրոնի ինքնության էական փոփոխություններ չեն եղել:

Գորիս քաղաքի մշակութային ժառանգության վերականգնման ու օգտագործման միջոցով նրա հետագա կայուն զարգացմանը, բնակչության կյանքի որակի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացման համար կարևոր նախադրյալներ են քաղաքի նպաստավոր աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, բնության բազմաթիվ հուշարձաններ ընդգրկող յուրահատուկ կենսապատկերը, դարերի ընթացքում կազմավորված պատմամշակութային հարուստ ժառանգությունը և ազգային ինքնատիպ ավանդույթները, ինչպես նաև ինժեներական բոլոր ենթակառուցվածքներն ու գիտական ներուժը:

However, the historical centre of Goris has not undergone significant changes.

The favourable geographical location of Goris, its natural and climatic conditions, the unique landscape with numerous natural monuments, the rich historical and cultural heritage developed during centuries, and the original national traditions, as well as all engineering infrastructures and scientific potential are important preconditions for implementation of the project aimed at further sustainable development of the town and improvement of the living standards of the local population through restoration and usage of cultural heritage of Goris.



Հին Գորիսի համայնապատկեր, 1800 թ.,
Հայաստանի պատմության թանգարանի արխիվ
Panorama of Old Goris, 1800,
Archive of the History Museum of Armenia

Ավանգարդ կամ Ծտի բներ թաղամաս,
կառուցված 1960-ականներին
Avant-garde or Bird Nests District
built during the 1960s

ՏԵՂԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՒՄԲ

COMUS ծրագրի տեղական շահառունե-
րի խումբը ստեղծվել է ծրագրի ղեկավարի՝
կարողությունների քարտեզագրման և ավ-
գային համակարգողի հետ իրականացրած
հարցումների ու հարցազրույցների միջոցով
և դրանց ամփոփման արդյունքում:

Մի շարք հանդիպումների ընթացքում տե-
ղական իշխանություններից, հանրային
դերակատարներից և փոքր ու միջին ձեռնե-
րեցներից բաղկացած խումբը մասնակցել է

LOCAL STAKEHOLDERS GROUP

The Local Stakeholders Group of the COMUS project was formed based on the mapping carried out by the Project Officer, through surveys and interviews conducted with the National Coordinator.

In the course of several meetings, the group consisting of local authorities, community activists, small and medium enterprises, took part in

COMUS-ի պիլոտային քաղաքի ընդհանուր աշխատանքներին: Նրանք անմիջական ներգրավվածություն են ունեցել հիմնական խնդիրների ձևակերպման, լուծումներ փնտրելու, համընդհանուր տեսլականի ու դրա նպատակների սահմանման աշխատանքներին, ինչպես նաև քաղաքի՝ կոնկրետ ժառանգությանը միտված վերականգնման գործողությունների մշակմանը: Ծրագրային փուլերի ընթացքում խմբի նախնական և վերջնական ընտրությամբ սահմանվել են այն գործողությունները, որոնց վերաբերյալ մշակվել են Նախնական տեխնիկական գնահատումներ և Իրագործելիության ուսումնասիրություններ:

the general activities related to the COMUS pilot town. The group was directly involved in identification of basic problems, search for solutions, definition of the shared vision and objectives, as well as development of the actions aimed at restoration of the town's heritage. During the project stages, by preliminary and final selection of the group, those actions were defined, for which Preliminary Technical Assessments and Feasibility Studies were developed.

Տեսարան Հին Գորիսից
View from Old Goris

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԼԱԿԱՆ

Մշակված Տեղական շահառուների խմբի կողմից

Գորիսը կվերաճի հարավային Հայաստանի ստեղծագործական հանգույցի՝ հիմնված առկա մարդկային ներուժի, մշակութային ռեսուրսների, բնական ու մշակութային կենսապատկերի և ոչ նյութական ժառանգության վրա:

Ժառանգության վրա հիմնված ռազմավարության մշակումը՝ նպատակաուղղված պատմական քաղաքի կենտրոնի վերականգնմանը, կարող է խթան հանդիսանալ կբոսաշրջության և տնտեսական զարգացման համար: Այն կարող է ամբողջացնել քաղաքային համալիրների և կենսապատկերի գրավչությունը, իսկ հանրային տարածքների ու ենթակառուցվածքների արդիականացումը կնպաստի բնակության և աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովմանը՝ խթանելով քաղաքի հավասարակշիռ կայուն զարգացումը, կորստից պահպանելով առկա պատմաճարտարապետական բարձրարժեք շինությունները:

Փողոց Գորիսում
Street in Goris

SHARED VISION

elaborated by Local Stakeholders Group

Goris will again grow into a creative hub of Southern Armenia, based on the existing human potential, cultural resources, natural and cultural scenery and intangible heritage.

Development of heritage-based strategy, aimed at restoring the historical city centre, might boost tourism and economic development. It might enhance attractiveness of urban complexes and landscapes; modernization of public areas and infrastructures will ensure favourable conditions for residence and work, promoting balanced sustainable development of the town and protecting the existing high-value historical-architectural buildings.

Դրվագ Գորիս քաղաքի պատմշակութային հիմնավորման նախագծից, հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, 1982 թ.
Fragment from Historical and Cultural Preposition Plan of Goris, Authors: A. Grigoryan, H. Sanamyan, A. Gyulamiryan, 1982



Համընդհանուր տեսլականի
ՆՊԱՏԱԿՆԵՐ

1 Զարգացնել տարածաշրջանի բնական ու մշակութային ներուժի ինտեգրված օգտագործմանը միտված կբոսաշրջությունը՝ բարձրացնելով Գորիսի մրցակցային գրավչությունը՝ որպես հենակետ, ամրապնդելով շրջակա բնակավայրերի հետ համագործակցությունը

2 Վերակենդանացնել պատմական քաղաքը՝ դիտարկելով այն որպես ժառանգության պահպանության և կբոսաշրջության կարգացման շարժիչ

OBJECTIVES
of the Shared Vision

1 Enhance tourism, aimed at the integrated use of natural and cultural potential of the region, increasing competitive attractiveness of Goris, strengthening cooperation with the neighbouring settlements

2 Revive the historical city, viewing it as preservation of heritage and a driving force for development of tourism

3 Նպաստել ստեղծարար ոլորտների կարգացմանը՝ բնական ու մշակութային լանդշաֆտի և ոչ նյութական ժառանգության համադրությամբ՝ դիտարկելով SS ոլորտում առկա ներուժն ու պատմական Մետաքսի ճանապարհի վրա գտնվելը որպես առավելություն

4 Կատարելագործել կրթական և հանրային իրազեկման միջոցները՝ նպատակ ունենալով նպաստել ժառանգության պահպանմանն ու դրան առնչվող ոլորտների կարգացմանը և տարածմանը

5 Ձևավորել առողջ ապրելու համար անհրաժեշտ շրջակա միջավայր՝ կարգացնելով քաղաքային կառավարման ենթակառուցվածքներն ու հանրահռչակել էկոլոգիապես մաքուր արտադրությունները

3 Promote development of creative fields, through a combination of natural and cultural landscape and intangible heritage, considering the existing potential in the IT sector and location on the historical Silk Road as an advantage

4 Improve the tools of increasing educational and public awareness, to promote preservation of heritage, development and spreading of related fields

5 Create environments necessary to lead healthy lifestyles, developing the urban management infrastructures and popularizing environmentally friendly production

Գորիսի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մուտքը, 19-20-րդ դդ.
Entrance of Saint Gregory The Illuminator Church in Goris, 19-20 cc.

ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(որոնց համար մշակվել են Նախնական տեխնիկական գնահատումներ)

1 Գորիս համայնքի հանրային տրանս-պորտի համակարգի վարգացում և կանգառների արդիականացում

2 Գորիսի քաղաքային պատմական փողոցների արդիականացում

3 Գորիս քաղաքի 5-րդ ճակատի (տանիք-ների) ուսումնասիրում ու առաջարկների մշակում

4 Հին Գորիսի քարանձավային բնակավայրի վերակենդանացում

5 Քաղաքի մշակութային գոտու և մարկահամալիրի վերակենդանացում ու բարեկարգում





ԸՆՏՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(որոնց համար մշակվել են նաև Իրա-գործելիության ուսումնասիրություններ)

1 Գորիսի քաղաքային պատմական փողոցների արդիականացում

2 Հին Գորիսի քարանձավային բնակավայրի վերակենդանացում

Հին Գորիսի վերականագնման նախագծից, հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, 1982 թ.
Fragment from Old Goris Restoration Project, Authors: A. Grigoryan, H. Sanamyan, A. Gyulamiryan, 1982



SHORTLISTED ACTIONS

(for which Preliminary Technical Assessments have been developed)

1. Transport System and Stations for Goris community area
2. Goris Urban Streets Rehabilitation
3. Study and Proposal for the 5th facade (roofs)
4. Rehabilitation of Old Goris Cave town
5. Redevelopment of Surrounding area of the Football field to Sport Cultural Park





SELECTED ACTIONS

(for which Feasibility Studies have also been developed)

1 Goris Urban Streets Rehabilitation

2 Rehabilitation of Old Goris Cave town

Հին Գորիսի վերականգնման հայեցակարգային առաջարկ, հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, 1982թ.
Old Goris Restoration Conceptual Project, Authors: A. Grigoryan, H. Sanamyan, A. Gyulamiryan, 1982

ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

1850-ական թվականներից Վարարակն գետի աջափնյա տարածության վրա սկսվում են Նոր Գորիսի հիմնադրման աշխատանքները: Բուռն շինարարական գործունեությունը ծավալվում է գավառապետ Ստարացկու ժամանակ՝ 1870-ական թվականներին, Մանուչար-Բեկ Մելիք Հյուսեինյանի գործուն

GORIS URBAN STREETS REHABILITATION

The works of establishing New Goris on the right bank of Vararakn River started in 1850s. Rapid construction activities were carried out in the 1870s, when Staratski was the province head, with active participation of Manuchar-Bek Melik Hyuseinyan, according to the design drawn by a German architect.

Գորիսյան դարպաս
Gorisian Gate

Բնակելի տուն Գորիսում
House in Goris

մասնակցությամբ և գերմանացի ճարտարապետի կազմած նախագծով:

Նոր Գորիսի գլխավոր հատակագիծը նախագծվում է 18-րդ դարի ռուսական քաղաքաշինությանը բնորոշ սկզբունքներով: Հաշվի առնելով տեղանքի հնարավորությունները՝ բնակավայրի կառուցապատման համար ընտրվում է աշխարհի կողմերի նկատմամբ մի փոքր շեղված, փոխադարձաբար ուղղահայաց փողոցների ցանց, ըստ որի՝ միմյանցից տարբեր հեռավորություններ ունեցող փողոցների հատումից առաջանում են քառակուսի՝ 106x106 մ ու քառանկյուն՝ 106x212 մ չափերի բնակելի թաղամասեր և 212x212 մ չափերով հասարակական կենտրոն:

The Master Plan of New Goris was drawn up in the 18th century, according to the principles characteristic of the Russian town planning. Taking into account the possibilities of the area, a network of streets, a little inclined towards the parts of the world, mutually perpendicular, was chosen, in which, intersection of the streets located at different distances from one another, creates square - 106x106 m - and rectangular - 106x212 m- residential districts and a social centre sized 212x212 m. The pivotal streets were designed with width of 24 m, and the width of the rest of the roads was

Առանցքային փողոցները նախագծվում են 24 մ լայնությամբ, իսկ մնացածները՝ 17 մ: Փողոցների մայթերը սալարկվել են և ծառատնկվել հիմնականում թթի, մասամբ՝ կեռասի և բալի ծառերով: Մայթեզրերով անցկացվել են ոռոգման ջրերի առուներ:

1947 թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտում ճարտարապետ Պ. Խոյեցյանի կողմից կազմվում է Գորիս քաղաքի զարգացման և մանրամասն հատակագծման նախագիծը, որի համաձայն՝ գոյություն ունեցող ուղղանկյուն հատակագծային ցանցը մեխանիկորեն տարածվում է բնակավայրի հյուսիսային և արևմտյան մասերի՝ մեծ թեքություններով լանջերին:

17 m. The sidewalks of the streets were paved and planted with trees, mostly mulberry, also sweet cherry, and cherry. Irrigation water ditches were constructed along pavement edges.

In 1947, in "ArmStateDesign" (ArmGosProyekt) Institute, architect P. Khoyetsyan developed a new Master Plan and Detailed Planning Project according to which the existing rectangular street network automatically stretched out to highly slanting slopes on the Northern and Western parts of the settlement.

Գորիսյան դարպաս
Gorisian Gate

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է մայթերը վերակառուցել, հատկապես պատմական միջուկի սահմաններում, տեղական սալաքարերով՝ հնարավորին խուսափելով ասֆալտապատումից, վերականգնելով նախնական տեսքը: Պատմական միջուկի տարածքում ցանկալի է, որ փողոցները նույնպես սալարկվեն տեղական քարերով, իսկ արգելոցի տարածքից դուրս կարող են սալարկվել միայն մայթերը՝ փողոցները թողնելով ասֆալտապատ:

BRIEF DESCRIPTION OF THE PROPOSAL

It is necessary to modernize the sidewalks, especially in the historic centre, using local paving stone, avoiding asphalt whenever possible, restoring the original appearance. It is preferable that the streets in the historic centre are also paved with local stones, and outside the reserve area it is possible to pave only the sidewalks, leaving the streets laid with asphalt.

Բնակելի տուն Գորիսում
House in Goris

Բնակելի տուն Գորիսում
House in Goris

Քաղաքի մակերևութային ջրահեռացումը հնարավոր է իրականացնել մայթերին կուգահեռ անցնող առուների միջոցով, ինչի համար անհրաժեշտ է վերակառուցել այդ առուների ամբողջ համակարգը տեղական բազալտ քարերով, վերականգնել քանդված և խաթարված հատվածները, անհրաժեշտության դեպքում լայնացնել և խորացնել լայնական փողոցներով անցնող առուները, կառուցել վերջինների՝ գետի մեջ լցվելու հատվածները՝ ապահովելով ջրերի անարգել հոսքը գետի մեջ՝ այդ հատվածների ճահճացումից խուսափելու համար:

Surface drainage of the town can be implemented by means of the ditches parallel to the sidewalks, for which it is necessary to reconstruct the whole system of the ditches with local basalt stones, to rebuild the destroyed and damaged parts, if necessary, to widen and deepen the ditches on lateral streets, to construct their segments pouring into the river, ensuring unhindered flow of water into the river, to avoid bogging up of these sections.

Բնակելի տուն Գորիսում
House in Goris

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գորիս քաղաքում առավել դիտարժան են ճարտարապետական առանձին կառույցները, նրանցով կազմավորված փողոցները, պատմական կենտրոնը: Փողոցների նեղ մայթերը ծառատնկված են հիմնականում թթի, մասամբ կեռասի և բալի ծառերով: Մայթեզրերով անցնում են ոռոգման ջրերի առուներ:

Բնակելի տների հիմնական մուտքերի կողքին տեղադրված են եղել նստարաններ, որտեղ նստել և անցուդարձին են հետևել բնակիչները: Այս քաղաքաշինական և ճարտարապետագեղարվեստական ամբողջությունը ստեղծում է քաղաքային պատմական մի միջավայր:

SIGNIFICANCE

The most spectacular parts of Goris town are certain architectural structures, the streets formed by them, and the historical centre. There are mainly mulberry, partly sweet cherry, and cherry trees on the narrow sidewalks of the streets. Irrigation water ditches are constructed along pavement edges.

There were benches next to the main entrances of residential houses, where the residents sat and watched the events happening around them. This town building and architectural-artistic integrity creates a historical urban environment.



ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնական փողոցների մայթերի վերականգնմամբ, հեղեղատար համակարգի արդիականացմամբ և հեծանվային ուղիների կառուցմամբ Գորիսում էականորեն բարելավվելու է կենսամիջավայրը՝ ստեղծելով նաև բիզնեսի համար նոր հնարավորություններ:

Անհրաժեշտ ֆինանսավորումը կոպիտ հաշվարկներով կազմելու է շուրջ 2'901'550'000 դ (5,474,051 €), որը կարող է իրականացվել փուլային եղանակով:

Տևողությունը կարող է լինել փուլային տարբերակով:

RESULTS

Due to reconstruction of main streets sidewalks, modernization of drainage systems and construction of cycle lanes, the living environment of Goris town will be increased, providing also new business opportunities.

Necessary funding: According to draft estimation, this will amount to about 2'901'550'000դ (5,474,051€) and can be implemented in stages.

Duration: Goris Urban Streets Rehabilitation should be implemented in phases.



Բնակելի տուն Գորիսում
House in Goris



Հին Գորիսի վերականգնման հայեցակարգային առաջարկ, հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, 1982 թ.

Old Goris Restoration Conceptual Project, Authors: A. Grigoryan, H. Sanamyan, A. Gyulamiryan, 1982

ՀԻՆ ԳՈՐԻՍԻ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ

Հին Գորիսի ինքնատիպությունը պայմանավորված է հատկապես շրջապատող բնությամբ՝ կոնաձև ուղղաձիգ ժայռերով: Այն մինչև 20-րդ դարի սկիզբը ամբողջությամբ բնակեցված է եղել վաղագույն ժամանակներից: Ամբողջ բնակավայրի տարածական կառուցվածքը կրկնել է բնական տեղանքի տարածական ձևերը:

REHABILITATION OF OLD GORIS CAVE TOWN

The destructiveness of Old Goris is mainly due to the surrounding nature, the cone-shaped vertical rocks. Until the beginning of the 20th century, it was entirely inhabited since earliest times. The spatial structure of the whole settlement repeated the spatial forms of the natural site.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հին Գորիսի տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները և բնական քերծերն ու «քրատակերը» իրենց հետաքրքիր անսովոր ձևերով լրացնում են քաղաքային միջավայրը, հարստացնում այն և նրան հաղորդում գեղարվեստական նոր որակ: Ներկա իրավիճակում Հին Գորիսի դերի ակտիվացման համար անհրաժեշտ է ապահովել և բարելավել նրա ընկալումը Վարարակն գետի աջ և ձախ ափերին ձգվող չկառուցապատված հատվածներից, հատկապես նրա աջափնյա բարձր դիրք ունեցող «Կալին բաշ» կոչվող հարթակից, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու, Կոմիտասի և Գուսան Աշոտի փողոցներից: Նշված փողոցներից ընկալման ապահովումը կարևոր է Հին և Նոր Գորիսների հորինվածքային փոխկապվածության ամրապնդման համար: Վարարակն գետի աջափնյա հատվածները նպատակահարմար է չկառուցապատել և օգտագործել որպես դիտահրապարակներ:

Հին Գորիսի համայնապատկեր
Panorama of Old Goris

BRIEF DESCRIPTION OF THE PROPOSAL

The historical-architectural monuments located in Old Goris area, the natural caves and caverns, with their unusual and interesting forms complement the urban environment, enriching it and giving it a new artistic quality. To activate Old Goris' role in the current situation, it's necessary to ensure and improve its perception from the undeveloped parts stretching along the right and left banks of Vararakn River, particularly from upland "Calin Bash" platform on the right bank of the river, as well as from Grigor Narekatsi, Grigor Tatevatsi, Komitas, and Gusan Ashot streets. For reaching this results it is important the enhancement of compositional correlation between Old and New Goris. It is expedient to leave the right-bank parts of Vararakn River undeveloped and use them as observation platforms.

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետական նշանակության պատմամշակութային արգելոց է, որը ներկայանում է և՛ որպես բնական, և՛ որպես ճարտարապետական հուշարձան: ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի մեջ ներառված են Սբ. Հռիփսիմե եկեղեցին, «Մելիքների» եկեղեցին, 52 բնակելի քարայր, քարանձավային ամֆիթատրոնը, քարավանատունը, բնակելի քարաբուրգերի համալիրը, Ձագեձոր ամրոցը, ձիթհանքը, Վարարակն գետի վրայի կամուրջը, 9 բնակելի տուն, գերեզմանոցը, տապանաքարեր և խաչքարեր:

SIGNIFICANCE

It is a historical-cultural reserve of republican importance, which is both a natural and architectural monument. The state list of historical and cultural monuments of the Syunik region of the RA includes St. Hripsime Church, Meliks' church, 52 residential caves, cave amphitheatre, caravanserai, residential stone hill complex, Dzagedzor fortress, oil presser, bridge over the Vararakn River, 9 residential houses, a graveyard, gravestones, and khachkars.

Հին Գորիսի համայնապատկեր
Panorama of Old Goris

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հին Գորիսի վերակենդանացման արդյունքները տնտեսական և մշակութային են: Տնտեսական բաղադրիչով ներդրողները, որոնք հարում են կբոսաշրջությանը, հատկապես փոքր ու միջին ձեռներեցները կարող են վարգացնել իրենց բիվնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր, բարելավելով տեղի բնակիչների կենսամակարդակը: Միևնույն ժամանակ այս նախաձեռնության արդյունքում ստեղծվելու են հուշարձանների պահպանության լավագույն նախադրյալներ:

RESULTS

The results of Old Goris rehabilitation will be social and cultural. Economically oriented investors, dealing with tourism, particularly small and medium entrepreneurs, will be able to enhance their business, creating new working places and improving the living standards of the local inhabitants. At the same time, this initiative will create the best preconditions for preservation of the monuments.

Տևողությունը կարող է լինել փուլային տարբերակով 6 ամսյա նախապատրաստական աշխատանքներից հետո:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, որը կարող է իրականացվել փուլային եղանակով:

3'340'000'0000 դ
(6,301,880 €)

NECESSARY FUNDING
that can be implemented in stages.

Duration: Restoration and reuse of Old Goris is a long-term project and after 6 months of preparation can be implemented in phases.

Դրվագ Գորիս քաղաքի պատմշակութային հիմնավորման նախագծից, հեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան, 1982 թ.
Fragment from Historical and Cultural Preposition Plan of Goris, Authors: A. Grigoryan, H. Sanamyan, A. Gyulamiryan, 1982

Ազգային համակարգող Գոհար Գրիգորյան
Ծրագրի ղեկավար Սարհատ Պետրոսյան

Գորիսի ԾԻԳ ղեկավար Հայարփի Ավանեսյան
Գորիսի ՏՇԽ համակարգող Սուսաննա Շահնազարյան
Գորիսի ԾԻԳ փորձագետներ Նունե Պետրոսյան
Հովհաննես Սանամյան
Նանար Քալանթարյան
Միջազգային փորձագետ Ալեքսանդրա Քրուս

Ձևավորումը INFOGRAPHICS.AM

Հրատարակվել է ԵՄ և ԵԽ համատեղ «Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագրի շրջանակում: Դրա բովանդակությունը կարող է և չներկայացնել Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետը:

This publication was published in the framework of the Joint Project of EU and CoE "Community-led Urban Strategies in Historic Towns" (COMUS). The content does not necessarily represent the official position of the European Union and/or Council of Europe.

National Coordinator Gohar Grigoryan
Project Officer Sarhat Petrosyan

Goris PIU Manager Hayarpi Avanesyan
Goris LSG Coordinator Susanna Shahnazaryan
Goris PIU Experts Nune Petrosyan
Hovhannes Sanamyan
Nanar Kalantaryan
International Expert Alexandra Kruse

Design by INFOGRAPHICS.AM